

Թորոնթո

ԵՐԱԳԻՐ ՆՈՐ ԺՈՒՆԻՆ

1. Ժխական Խորհուրդին հետ նստիլ ``միւս խումբին ներկայացուցիչներով``
2. Քաղաքին քարտէսը պատրաստել --դրօշակներով-- ժողովուրդին բնակավայրը ծշղելու համար
3. Ժուիներու սահմանները եւ անդամները ծշղել
4. Առաջնորդ Սրբազան Հայրը ``նոր Եկեղեցւոյ`` Եինութեան Յանձնախումբ մը պիտի նշանակէ, որուն պարտականութիւնը կը վերջանայ տեղը եւ շէնքը ապահովելով
  - ա. Տեղ գտնել
  - բ. Նիւթականը ապահովել --400 անձերու 5 տարուան խոստում մը ապահովել տարեկան նուազագոյն 200 տոլար, 20 տոլար ամիսը - 5 տոլար շաբաթը--
  - գ. Եէնքը ապահովել
5. Առաջնորդ Սրբազան Հայրը առժամեայ ժխական Խորհուրդ մը պիտի նշանակէ
  - ա. Տրատու անդամները ծշղել
  - բ. Եկեղեցին ծծումի աստիճանի բերել
  - գ. ``Ինգորփորէյշըն``ը իբրեւ ժուիս Առաջնորդին հաւանութեամբ հաստատել
  - դ. Տուրքերէ գերծ դրութիւնը ստուգել
  - ե. Օձման ատեն Եկեղեցւոյ անունը կ'որոշուի կնքահայրի փափաքը նկատի ունենալով
  - զ. Եկեղեցւոյ յարակից կազմակերպութիւնները կազմել` Տիկնանց Միութիւն, Երիտասարդաց, Կիրակնօրեայ Դպրոց, Հայ Դպրոց, Դպրաց Դաս, Եւայլն
  - է. Ժխական անդամական ժողով գումարել, Առաջնորդ Սրբազան Հօր ներկայացուցիչի նախագահութեամբ
  - ը. Առաջին ընտրեալ ժխական Խորհուրդը կազմել
  - թ. Պիւտժէն հաստատել, ինչպէս նաեւ յարակից կազմակերպութիւնները